| Eligibility Criteria | **Պիտանելիության չափորոշիչի զագաթի մակարդակի հանգույց** |
| Technical Envelope | **Տեխնիկական ծրարի զագաթի մակարդակի հանգույց** |
| Financial Envelope | **Ֆինանսական ծրարի զագաթի մակարդակի հանգույց** |
| | **Ուշադրության նշան**. Պակասող տեղեկատվություն կամ ոչ ճիշտ տեղեկատվություն՝ բաժնում (կամ դրա ենթաբաժինների մեջ) |
| | **Ընդունման նշան**. Բաժնի ու դրա ենթաբաժինների բոլոր չափորոշիչները ճշգրտորեն լրացվեցին |
| Year | **Տարիներ**. Ֆինանսական ծրարում յուրաքանչյուր տարի կցուցադրվի առանձին |
| | **Հետ հավաքում**. Բաժինը հետ է հավաքած |
| | **Բացազատված.** Բաժինը բացազատված է |
| | **Հաջող հաստատման նշան.** Չափորոշիչն հաջողությամբ վավերացվեց |
| | **Անհաջող հաստատման նշան.** Չափորոշիչի վավերացումը ձախողվեց |
| | **Նավարկել** ծնող բաժնի մեջ |
| | **Բացազատել** հայտի որևէ բաժին |




Նկար 58 Հայտի նախապատրաստությանը գործիք, տեխնիկական ծրար

### 11.2.1. Պիտանելիության չափորոշիչն ու տեխնիկական ծրարը լրացնելը

Է-Մրցույթի պլատֆորմը ընդունում է չափորոշիչի հետևյալ տիպերը.

- Տեքստային Դաշտը
- Համար
- Ֆայլ
- Ցուցակ
- Ամսաթիվ
- Ժամանակաշրջան

Նկարագրությունը թե ինչպես լրացնել վերը նշված տիպերի չափորոշիչը տված է հաջորդ բաժիններում:

### 11.2.2. Չափորոշիչի Տեքստային դաշտ տիպը

Այս տիպի չափորոշիչի համար, Տնտեսական օպերատորը պետք է տա իր տեքստային պատասխանը ցուցադրելով այն տեքստային պատուհանի մեջ:

Տնտեսական օպերատորի պատասխանի համար տառերի առավելագույն քանակը նույնպես ցուցադրված է (Նկար 59): Օգտվողը կարող է նաև կցել մի ոչ պարտադիր ֆայլ իր պատասխանի մեջ տրամադրելով լրացուցիչ մանրամասներ:




**Նկար 59 Տեքստային դաշտի տիպի չափորոշիչի մատակարարի տեսքը**

### 11.2.3. Չափորոշիչի Տեքստային տարածք տիպը

Այս տիպի չափորոշիչի համար, Տնտեսական օպերատորը պետք է տրամադրի իր տեքստային պատասխանը ցուցադրելով այն տեքստային տարածքի տուփի մեջ: Տնտեսական Օպերատորի պատասխանի նիշերի առավելագույն թիվը ևս ցուցադրվում է (Նկար 60): Օգտվողը կարող է նաև կցել մի ոչ պարտադիր ֆայլ իր պատասխանի մեջ տրամադրելով լրացուցիչ մանրամասներ:




**Նկար 60 Տեքստային տարածք տիպի չափորոշիչի մատակարարի տեսքը**

### 11.2.4. Չափորոշիչ Թիվ տիպը

Այս տիպի չափորոշիչի համար տրամադրվող տուփի մեջ Տնտեսական օպերատորը պետք է տրամադրի իր պատասխանն իբրև թիվ: Թվի նվազագույն ու առավելագույն միջակայքերը ցուցադրվում են բնութագրած քայլի չափի հետ (Նկար 61): Օգտվողը կարող է նաև կցել մի ոչ պարտադիր ֆայլ տրամադրելով լրացուցիչ մանրամասներ իր պատասխանի մեջ:




**Նկար 61 Թիվ տիպի չափորոշիչի մատակարարի տեսքը**

### 11.2.5. Չափորոշիչի Ֆայլ տիպը.

Այս տիպի չափորոշիչի համար Տնտեսական օպերատորը համակարգի մեջ պետք է բեռնի որևէ ֆայլ: Կցվող ֆայլն ընտրելու համար օգտվողը պետք է օգտագործի «**Կցել Ֆայլ**» կոճակը: Ֆայլի առավելագույն թույլատրվող չափը ևս ցուցադրվում է (Նկար 62):




**Նկար 62 Ֆայլ տիպի չափորոշիչի մատակարարի տեսքը**

### 11.2.6. Չափորոշիչի Ցուցակ տիպը

Համակարգն ընդունում է երեք տիպի ցուցակներ՝

- Ռադիոյի կոճակներ
- Նշման վանդակներ
- Կոմբո տուփեր

Մատակարարը կունենա այս տիպի չափորոշիչի հետևյալ տեսքերը.




**Նկար 63 Ցուցակ տիպի (սեղմակներ) չափորոշիչի մատակարարի տեսքը**




Նկար 64 Ցուցակ տիպի (նշման վանդակներ) չափորոշիչի մատակարարի տեսքը




Նկար 65 Ցուցակ տիպի (կոմբո տուփ) չափորոշիչի մատակարարի տեսքը

### 11.2.7. Չափորոշիչի ամսաթիվ տիպը

Այս տիպի չափորոշիչի համար Տնտեսական օպերատորը պետք է ընտրի մի ամսաթիվ: Պահանջվող ամսաթիվն ընտրելու համար օգտվողն ընտրում է կոճակը բացազատելու համար տրամադրվող օրացույցի ֆունկցիոնալությունը (Նկար 66): Օգտվողը կարող է նաև կցել մի ոչ պարտադիր ֆայլ տրամադրելով լրացուցիչ մանրամասներ իր պատասխանի մեջ:




Նկար 66 Ամսաթիվ տիպի չափորոշիչի մատակարարի տեսքը

### 11.2.8. Ժամանակահատված չափորոշիչի տիպը

Այս տիպի չափորոշիչի համար Տնտեսական օպերատորը պետք է ընտրի երկու ամսաթվի միջակայք(«սկսած-մինչև»): Պահանջվող ամսաթվերն ընտրելու համար օգտվողն ընտրում է կոճակները բացազատելու համար տրամադրվող օրացույցի ֆունկցիոնալությունը (Նկար 67): Օգտվողը կարող է նաև կցել մի ոչ պարտադիր ֆայլ իր պատասխանի մեջ տրամադրելով լրացուցիչ մանրամասներ:




Նկար 67 Ժամանակաշրջան տիպի չափորոշիչի մատակարարի տեսքը

### 11.2.9. Միայն ընթերցման մատակարար չափորոշիչը

Այս ընտրությունը դնում է մի չափորոշիչ, երբ մատակարարները չեն կարող պատասխան տրամադրել (միավորներ հանդիպումներից, շնորհանդեսներ, այցելություն մատակարարին և այլն): Մատակարարը կտեսնի չափորոշիչի գոյությունը հայտում, բայց միավորները կտրամադրվեն ուղղակիորեն գնահատողների կողմից:

Մատակարարին այս տիպի չափորոշիչը կերևա հետևյալ կերպ




**Նկար 68 Միայն ընթերցման մատակարար սահմանված չափորոշիչի մատակարարի տեսքը**

### 11.2.10. Ֆինանսական ծրարի լրացումը

Պլատֆորմը ցուցադրում է մրցույթի կառուցվածքի բոլոր ֆինանսական չափորոշիչները: Օգտվողը լրացնում է «**Արժեք**»սյունակն ու սահմանում է մի ոչ պարտադիր զեղչ «**Համընդհանուր զեղչի**» բաժնում (Նկար 69): «**Համընդհանուր զեղչի**» բաժինը կակտիվանա միայն, եթե կցված Գնման Պատասխանատուն սահմանի, որ ՄՀ-ի համար զեղչը թույլատրված է: «**Ընթացիկ արժեք (€)**» ու «**Զեղչված ընթացիկ արժեք (€)**» ինքնաբերաբար հաշվվում են համակարգի կողմից:




**Նկար 69 Ֆինանսական չափորոշիչ**

Եթե ֆինանսական ծրարը սահմանվում է մի քանի տարվա համար, ապա օգտվողը պետք է ֆինանսական չափորոշիչը լրացնի յուրաքանչյուր առանձին տարվա համար (Նկար 69): Ձախ պանելից որևէ տարի ընտրելն օգտվողին թույլ է տալիս լրացնել ֆինանսական չափորոշիչի արժեքները այդ առանձին տարվա համար: Ընտրելով «**Ֆինանսական Ծրարի**» գագաթի մակարդակի ընտրությունը ցուցադրվում է ֆինանսական առաջարկի հանրագումարը (Նկար 70).




Նկար 70 Մի քանի տարվա ֆինանսական չափորոշիչը

## 11.2.11. Պահպանել մրցույթի պատասխանը

Օգտվողը կարող է պահպանել ստեղծված մրցույթի պատասխանն օգտագործելով (**Պահպանել**) և (**Պահպանել իբրև**) կոճակները: Համակարգը հուշում է օգտվողին սահմանել իր տեղական միջավայրում մի տեղ և պահպանել դա իբրև xml կառուցվածք (Նկար 71).




Նկար 71 Պահպանել մրցույթի կառուցվածքը

## 11.2.12. Վավերացնել մրցույթի պատասխանը

Տված պատասխանները վավերացնելու համար օգտվողն ընտրում է կոճակը: Համակարգը ստուգում է, եթե մրցույթի պատասխանը համապատասխանում է ակնկալվող առանձնահատկությանը (այսինքն՝ միջակայքի արժեքները, բոլոր պարտադիր դաշտերը լրացված են և այլն): Օգտվողը տեղեկացվում է հաստատման արդյունքների մասին (Նկար 72): Եթե հաստատումը հաջող չէ, ապա համակարգը ցուցադրում է այն բոլոր հարցերը, որոնց պատասխանները սխալ են (Նկար 72).




Նկար 72 Հայտի հաջող հաստատում




Նկար 73 Հայտի հաստատումը ձախողվեց

### 11.2.13. Փաթեթավորել մրցույթի պատասխանը

մրցույթի պատասխանի փաթեթավորումը պարտադիր առաջադրանք է, որը պետք է իրականացվի նախքան մրցույթի պատասխանը համակարգի մեջ բեռնելն, և երբ այլևս բոլոր փոփոխությունները արված են:

Մրցույթի պատասխանի պարունակությունները փաթեթավորելու համար օգտվողն ընտրում է կոճակը: Այս գործողությունը կառաջացնի մեկ կամ ավելի ֆայլեր կախված մրցույթի համար սահմանված ներկայացման տիպից.

- Միափուլ ներկայացում
  Համակարգը կգեներացնի մրցույթի պատասխանն իբրև մեկ, սեղմված ու գաղտնագրված ֆայլ, ծրագրում հայտնի իբրև '**Հայտի Փաթեթ**':
- Երկփուլ ներկայացում
  Համակարգի կողմից գեներացված հայտի պատասխանը կներառնի 2 ֆայլ: Մեկը վերը նշված 'Միափուլ ներկայացման' բաժնի '**Հայտի Փաթեթն**' է և պարունակում է բոլոր պատասխաններն ու կցված ֆայլերը: Երկրորդը '**Թվային ստորագրությունն**' է: Այս ֆայլը '**Հայտի Փաթեթի**' թվային ստորագրություն է, որ հավաստիացնում է 'Հայտի Փաթեթի' ամբողջականությունը:

- Եթե մրցույթի պատասխանը փոփոխված է փաթեթավորման իրականացումից հետո, ապա անկախ 'Միափուլ' կամ 'Երկփուլ' ներկայացման տիպից մի նոր փաթեթավորման անհրաժեշտություն կլինի՝ վերջին փոփոխությունները ներառնելու համար:

- Խնդրեմ ի նկատի ունենալ, որ փաթեթավորված՝ վերը նկարագրված քայլերի միջոցով ստեղծված ֆայլը (հայտի փաթեթը) գաղտնագրված է: Ուստի օգտվողին կցուցադրվի «ոչ ճիշտ ֆայլի ձևաչափ» ուղերձը, երբ փորձի բացել այս ZIP ֆայլը օգտագործելով winzip և այլն:

- Վերը նշվածի պատճառով, նախքան հայտի նախապատրաստության գործիքով փաթեթավորված հայտի ֆայլը ներկայացնելը մատակարարը պետք է վերջին ստուգման համար օգտագործի «Դիտել հայտի PDF» ֆունկցիոնալությունը

Գեներացված ֆայլերը պահպանվում են հայտի կառուցվածքի հետ նույն տեղական պանակում: Համակարգը կտեղեկացնի օգտվողին հայտի փաթեթավորման հաջող ավարտի մասին (Նկար 74).




Նկար 74 Հայտի փաթեթավորումը

### 11.2.14. Հայտի նախապատրաստության գծից դուրս գործիքը

Հայտ ստեղծելու Ֆունկցիոնալությունը իրականացվում է նաև օգտագործելով գծից դուրս հայտի նախապատրաստության գործիքը: Գծից դուրս հայտի

նախապատրաստության գործիքի ֆունկցիոնալությունը նույն է ինչ նկարագրված է 11.2.1 - **Error! Reference source not found.** բաժիններում:

անհատական համակարգչում հայտը տեղում պատրաստելու համար օգտվողը պետք է իրականացնի հետևյալ քայլերը.

1. Տեղական միջավայրում բեռնել հայտի նախապատրաստության գործիքը (ընտրել «**Բեռնել նախապատրաստության գործիքը**» կոճակը) (Նկար 75): Դուրս բերել արխիվից բոլոր ֆայլերը և աշխատեցնել ծրագիրը (Նկար 76).
2. Բեռնել մրցույթի կառուցվածքը տեղական միջավայրում (ընտրել «**Բեռնել մրցույթի կառուցվածքը**» կոճակը):

Խնդրեմ ինկատի ունենալ, որ «հայտի կառուցվածքի» ֆայլերն առանձնահատուկ են ու ստեղծված են մեկ ՄՀ-ի համար: Տնտեսական օպերատորի օգտվողը պետք է համոզվի, որ բեռնված հայտի կառուցվածքը համապատասխանում է ՄՀ-ին, որին նա ուզում է մասնակցել, այլապես գործիքով գեներացված, սխալ հայտի կառուցվածքով հայտի փաթեթը չի համապատասխանի Պայմանագրային պատվիրատուի կողմից պահանջվող մրցույթի նյութին և կարող է հանգեցնել առաջարկի որակազրկմանը:




**Նկար 75 Բեռնել հայտի նախապատրաստության գործիքը**




**Նկար 76  Գծից դուրս հայտի նախապատրաստության գործիքը**

3. Օգտագործել  կոճակը բացելու համար պահված xml կառուցվածքը (Նկար 77).
4. Լրացնել հայտը լրացնելով բոլոր բաժինները բոլոր ծրարներում (Նկար 78): 11.2.1 - **Error! Reference source not found.** բաժինները նկարագրում են ինչպես լրացնել հայտը:




Նկար 77 Բացել մրցույթի կառուցվածքը գծից դուրս հայտի նախապատրաստության գործիքի մեջ




Նկար 78 Գծից դուրս հայտի նախապատրաստության գործիքով բաժինները լրացնելը

### 11.2.15. Ստեղծել բազմակի չափաբաժիններով հայտ

Բազմակի չափաբաժիններով հայտի ստեղծման ընթացակարգը նույնն է ինչ նախորդ բաժիններում նկարագրված ընթացակարգը: Հայտի նախապատրաստության գործիքը թույլատրում է օգտվողին նավարկել տարբեր Չափաբաժինների մեջ օգտագործելով գործիքի ձախ պանելում տրամադրվող ֆունկցիոնալությունը (Նկար 79):




**Նկար 79 Բազմակի չափաբաժիններով հայտի լրացնելը**

Վերը նկարագրված մոտեցումից միակն տարբերությունն այն է, որ երբ օգտվողը վավերացնում է հայտը (ընտրելով ), կոճակը ) համակարգը հուշում է ընտրել, թե որ չափաբաժնի համար է ներկայացվում հայտը (Նկար 79) : Չափաբաժնի ընտրությունը, որի համար պետք է հայտը ներկայացվի մատակարարի կողմից հայտի ներկայացման առանցքային քայլն է: Եթե չափաբաժիններ չեն ընտրված, ապա բեռնված հայտի փաթեթը չի կարող ընդունվել Գնահատման Պատասխանատուների գնահատման և շնորհման փուլերի ընթացքում:

### 11.2.16. Մրցույթի պատասխանի խմբագրումը

Մրցույթի պատասխանը խմբագրելու համար օգտվողն ընտրում է տվյալ հայտը և ապա ընտրում է «**Խմբագրել**» կոճակը (Նկար 80): «**Հեռացնել**» կոճակը օգտագործվում է ընտրված հայտը ցուցակից հեռացնելու համար: Գծից դուրս նախապատրաստության գործիքով պատրաստված Մրցույթների պատասխանները խմբագրվում են ձեռքով՝ բացելով պահպանված հայտը, խմբագրելով ու վերջնականապես պահպանելով այն:




Նկար 80 Հայտի ստեղծման ու ներկայացման էջը

## 11.3. Մրցույթի պատասխանի վերաբեռնումը պլատֆորմի մեջ

Մրցույթի պատասխանի ներկայացումը համակարգում կախված է ներկայացման տիպից

էջում ցուցադրվում են հետևյալ խորհրդանշանները (Նկար 80)։

 Պահանջում են լրացուցիչ բաղադրիչներ

 Բոլոր ներկայացված բաղադրիչները / Հաշ համընկնում են/ Ժամանակին ներկայացում

 Պակասող բաղադրիչներ/ Հաշ անհամապատասխանություն/ Ուշացած ներկայացում

### 11.3.1. Միափուլ ներկայացում

Շարունակելու համար հայտի ներկայացման երկրորդ քայլը, օգտվողը պետք է ընտրի «**Բեռնել հայտի Փաթեթը**» կոճակը (Նկար 88).

Համակարգը հուշում է օգտվողին հաստատել, որ իր հաշվի մանրամասները ճիշտ են (Նկար 81) : Օգտվողն ընտրում է «**Հաստատել**» կոճակը հաստատելու հաշվի մանրամասների իսկությունը (ընտրելով «**Խմբագրել Հաշիվը**» կոճակը օգտվողը խմբագրում է իր հաշվի մանրամասները):




**Նկար 81 Հաստատել հաշվի մանրամասները**

Օգտվողի հաշվի մանրամասների իսկությունն հաստատելուց հետո, օգտվողին առաջարկվում է ընդունել այս ՄՀ-ի համար օգտվողի համաձայնության քաղաքականությունը (Նկար 82): Համաձայնությունն ընդունելու համար օգտվողը պետք է ընտրի «**Ընդունել**» կոճակը:




**Նկար 82 Ընդունել համաձայնությունը այս ՄՀ-ի համար:**

Հաշվի մանրամասները հաստատելուց և համաձայնությունն ընդունելուց հետո օգտվողին առաջարկվում է նշել բեռնվող հայտի փաթեթը (Նկար 84): Օգտվողն ընտրում է «**Թերթել**» կոճակը նշելու համար հայտի փաթեթի ֆայլը (Նկար 83):

Հայտի փաթեթն արխիվ է (արխիվի անունը վերջում պարունակում է «Տենդեր» բառը) որն ստեղծվում է «**Փաթեթավորել**» գործողության ընթացքում (**Error! Reference source not found. Error! Reference source not found.** բաժինը):




**Նկար 83 Բեռնել հայտի փաթեթը**




Նկար 84 Բեռնվող հայտի փաթեթի ընտրությունը

Գործողությունն ավարտելու համար օգտվողն ընտրում է «**Բեռնել**» կոճակը հայտի փաթեթը պլատֆորմում բեռնելու համար (Նկար 84) : Համակարգը զեներացնում է մի առանձնահատուկ Հայտի «**Փաթեթի ստացականի հ/հ**» և պլատֆորմի մեջ հայտի փաթեթի հաջող բեռնման վերաբերյալ տեղեկացնում օգտվողին:

### 11.3.2. Երկփուլ ներկայացում

'Երկփուլ ներկայացումը' ներառնում է հետևյալ քայլերը.

**Դիտողություն. Հայտի հաջող ներկայացումը պարտադրում է երկու քայլերի իրականացում: Այլապես, հայտը չի համարվի համակարգում ներկայացված:**

1. **'Թվային ստորագրության' բեռնումը**

Վերը նշվածի առաջին քայլն է հայտի թվային ստորագրության բեռնումը: Այս դեպքում օգտվողն ընտրում է «**Բեռնել հայտի փաթեթի Թ/Ս**»կոճակը (Նկար 80): Նոր պատուհանում (Նկար 85) օգտվողն ընտրում է «**Թերթել**» ֆունկցիոնալությունը նշելու հայտի փաթեթի թվային ստորագրությունը (Նկար 86): Թվային ստորագրությունը ստեղծվում է «**Փաթեթավորել**» գործողության ընթացքում, որ կատարվում է հայտի ստեղծման վերջում (**Error! Reference source not found.** բաժին **Error! Reference source not found.**):




**Նկար 85 Բեռնել նոր Թվային ստորագրություն**

Ֆայլի գեներացված թվային ստորագրության անունը պարունակում է ֆայլի անվան վերջում կցված "**DIGITAL_PRINT**" բառերը (Նկար 86).




Նկար 86 Ֆայլի Թվային ստորագրության ընտրությունը

Թվային ստորագրության համապատասխան ֆայլի ընտրությունից հետո օգտվողը սահմանում է հայտի անունը և ի վերջո ընտրում է «**Բեռնել**» կոճակը Թվային ստորագրությունը պլատֆորմին ներկայացնելու համար (Նկար 87):




Նկար 87 Սահմանել հայտի փաթեթի անունը

Երբ օգտվողը հաջողությամբ բեռնում է թվային ստորագրությունը ցուցադրվում է «Թվային ստորագրության ստացականի h/h» պարունակող մի հատուկ ուղերձ (Նկար 88): Համակարգը ցուցադրում է ներկայացված հայտերը հետևյալ տեղեկատվության հետ.

- **Ներկայացվել է**. Օգտվողն, ով ներկայացրել է հայտը
- **Անուն**. Հայտի անունը
- **Թ/Ս ստացականի h/h**. «**Թվային ստորագրության**» ներկայացման ժամանակ ստացված հատուկ «**Ստացականի h/h**»
- **Թ/Ս ներկայացման ժամանակ**. «**Թվային ստորագրության**» ներկայացման ժամանակը
- **Տ/Փ ստացականի h/h. «Հայտի Փաթեթի»առանձնահատուկ «Ստացականի h/համար»** (տես ստորև):

- **Տ/Փ ներկայացման ժամանակը.** «Հայտի Փաթեթի» ներկայացման ժամանակը
- **Կարգավիճակը**. ներկայացման կարգավիճակ
- **Թ/Ս համընկնման արդյունքները**. Ստուգում, թե «**Թվային ստորագրությունը**» համընկնում է ներկայացված «**Հայտի փաթեթի**» հետ:
- **Ժամանակին ստացված**. Ստուգում, թե հայտի ներկայացումը ստացվել է արդյո՞ք ժամանակին :

Այս փուլում ցուցակում առկա է միայն թվային ստորագրության ներկայացման վերաբերյալ տեղեկատվությունը: Բացի այդ ներկայացման կարգավիճակը պարունակում է խորհրդանշանը, որ ցուցադրում է, թե հայտի ներկայացման գործընթացն ավարտելու համար պահանջվում են լրացուցիչ բաղադրիչներ (հայտի փաթեթը):




Նկար 88 Թվային ստորագրությունը բեռնված է

2. <u>Բեռնել 'Հայտի փաթեթը'</u>

'Հայտի փաթեթը' բեռնելու համար, խնդրեմ հետևել 'Միափուլ ներկայացում' բաժնում նկարագրված քայլերին:

Եթե ներկայացումը հաջող էր, ապա կցուցադրվի Նկար 89 նմանատիպ մի էջ:




Նկար 89 Հայտի ներկայացումը

Ներկայացված հայտերի ցուցակում պլատֆորմը ցուցադրում է հայտի փաթեթի ներկայացմանը վերաբերող հետևյալ տեղեկատվությունը.

- Տ/Փ-ի ստացականի հերթական համարը
- Տ/Փ-ի ներկայացման ժամանակը

Բացի այդ, ներկայացման «**Կարգավիճակը**» պետք է ունենա  խորհրդանիշը ցուցադրող, որ բոլոր տարրերը ներկայացվել են (Նկար 89) : Պլատֆորմը նաև ստուգում է, որ բեռնված «**Թվային ստորագրությունն**» ու բեռնած «**Թվային Փաթեթը**" համընկնում են («**Թ/Ս համընկնման արդյունքներ**»սյունակը ունի

խորհրդանիշը ) և հայտը ներկայացված է ժամանակին (սյունը «**Ժամանակին ստացված**»):

Եթե հետևյալ սյունակներից որևէ մեկը նշված է խորհրդանիշով, ապա

- **Թ/Ս համընկնման արդյունք**. Բեռնած թվային ստորագրությունը չի համընկնում բեռնած հայտի փաթեթին:
- **Ժամանակին ստացված**. Հայտն ստացվել է սահմանված վերջնաժամկետից հետո: Պայմանագրային պատվիրատուի Պատասխանատուն կորոշի արդյոք դա կընդունվի թե ոչ:

Այս տիպի ներկայացման համար օգտվողը պետք է բեռնի Թվային Ստորագրությունը նախքան վերջնաժամկետը: Այդ դեպքում համակարգը օգտվողին տրամադրում է մի 24 ժամանոց շրջան բեռնելու համար նրա պահպանված հայտը համարելով, որ օգտվողը չի աշխատում իր հայտի վրա Թվային Ստորագրության գեներացումից հետո: Խնդրեմ ինկատի ունենալ, որ եթե օգտվողն աշխատում է իր հայտի վրա բեռնված «**Թվային Ստորագրության**» գեներացումից հետո, ապա ստորագրության ու պահպանված հայտի փաթեթի համընկնելիությունը կխախտվի, և հայտի փաստաթուղթը կմերժվի:

Օգտվողը կարող է փոփոխել իր բեռնած հայտը մինչև «**Հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի ժամանակային սահմանափակումը**»: Դրանից հետո հայտի ստեղծման, խմբագրման ու բեռնելու ֆունկցիոնալությունն ապաակտիվանում է:

Բեռնած հայտը փոփոխելու համար, օգտվողը նախ պետք է հեռացնի առկա հայտը օգտագործելով «**Հեռացնել**» կոճակը (Նկար 89) , և ապա բեռնի նոր հայտ: Այլապես կցուցադրվի մի սխալի ուղերձ ինչպես ցուցադրված է Նկար 90 –ում: Օգտվողը կարող է բեռնել մեկից ավելի հայտեր միայն այն ՄՀ-ի համար, որտեղ մեկից ավելի հայտերի ներկայացումը թույլատրված է:




**Նկար 90 Թույլատրվում է ներկայացնել միայն մեկ հայտ**

# 12. Հետադարձ կապ

Հետադարձ կապի հարցում ներկայացնելու համար օգտվողը «**ՄՀ ցանկից**» պետք է ընտրի «**Հետադարձ կապ**» ընտրանքը (Նկար 91):




**Նկար 91 ՄՀ ցանկ, ընտրանքը «Հետադարձ կապ»**

Օգտվողը տրամադրում է հետադարձ հարցումի «**Վերնագիրն**» ու «**Նկարագրությունը**»: Հնարավոր է նաև պլատֆորմում բեռնել մի ոչ պարտադիր ֆայլի հավելված (Նկար 92) : Հետադարձի հարցումը ներկայացնելու համար օգտվողը պետք է ընտրի «**Ուղարկել հարցում**»կոճակը:




**Նկար 92 Հետադարձի հարցումի ստեղծումը**

Պլատֆորմը տեղեկացնում է օգտվողին, որ հետադարձ կապի հարցումն հաջողությամբ ուղարկվել է (Նկար 93).




**Նկար 93 Հետադարձն հաջողությամբ ուղարկվեց**

Հետադարձ հարցման պատասխանը կլինի ցուցակագրված «**Ձեր Հետադարձ հարցումներն ու պատասխանները**» բաժնում («1. Հետադարձ վերաբերող գնահատման ընթացակարգին», Նկար 94)։ Յուրաքանչյուր ցուցակագրված հետադարձ հարցման առարկան կարելի է բացազատել, եթե օգտվողն ընտրում է բացազատումն, ապա տրամադրվում է մի մանրամասն նկարագրություն հարցման ու համապատասխան պատասխանի վերաբերյալ (Նկար 95)։




**Նկար 94 Հետադարձն ու պատասխանները**




Նկար 95 Հետադարձ հարցի պատասխանը

# 13. Էլեկտրոնային Աճուրդներ

Է-Աճուրդի մոդուլը Տնտեսական օպերատորներին տրամադրում է որևէ ՄՀ-ի կենդանի աճուրդի իրադարձությանը մասնակցելու բոլոր անհրաժեշտ ֆունկցիոնալությունները: Աճուրդի իրադարձություններին մասնակցելու համար Տնտեսական օպերատորները պետք է հրավիրվեն Պայմանագրային պատվիրատուի այն օգտվողի կողմից, ով համակարգում է տվյալ ՄՀ-ն:

## 13.1. Մասնակցությունը Է-Աճուրդի իրադարձությանը

Է-Աճուրդի հրավերին պատասխանելու համար օգտվողը պետք է իր առաջադրանքի ցուցակում ընտրի «**Պատասխանել Է-Աճուրդի հրավերին**» առաջադրանքը (Նկար 96).




**Նկար 96 Պատասխանել Է-Աճուրդի հրավերին**

Օգտվողն ունի ընտրանք «**Ընդունել մասնակցել Է-Աճուրդի իրադարձությանը**» (Նկար 97) կամ «**Մերժել մասնակցել Է-Աճուրդի իրադարձությանը**» (Նկար 99): Համակարգը տեղեկացնում է օգտվողին որոշման ընդունման (Նկար 98) ) / մերժման (Նկար 100) վերաբերյալ:




**Նկար 97 Ընդունել մասնակցել Է-Աճուրդի իրադարձությանը հրավերը**




Նկար 98 Է-Աճուրդի հրավերի ընդունման արդյունքները (հրավերն ընդունվել է)




Նկար 99 Մերժել մասնակցել Է-Աճուրդի իրադարձությանը հրավերը




Նկար 100 Է-Աճուրդի հրավերի ընդունման արդյունքները (հրավերը մերժվել է)

Աճուրդի իրադարձությանը մասնակցելու համար օգտվողը պետք է մտնի Է-Աճուրդի սրահ: Այս ֆունկցիոնալությունը հասանելի է ՄՀ-ի Մենյուի «Է-Աճուրդներ» ընտրանքից (Նկար 101).




**Նկար 101 ՄՀ ցանկ, «Է-Աճուրդներ» ընտրանքը**

Օգտվողին կցուցադրվի տվյալ ՄՀ-ի բոլոր պլանավորած Է-Աճուրդի իրադարձությունների ցուցակը (Նկար 102) : ՄՀ-ում պարունակվող յուրաքանչյուր Չափաբաժնի համար կկայանա Է-Աճուրդի մեկ առանձին իրադարձություն: Ցուցակը պարունակում է մանրամասն տեղեկատվություն իրադարձության վերաբերյալ: Մասնավորապես համակարգը թույլատրում է ցուցադրել այնպիսի տեղեկատվություն ինչպես իրադարձության տիպը՝ թե իրադարձությունը պաշտոնական է թե փորձնական, և իրադարձության սկսման ամսաթիվը:




**Նկար 102 ՄՀ-ին առնչվող Է-Աճուրդների ցուցակ**

«Է-Աճուրդի h/h» **ընտրությունը (Նկար 102) օգտվողին թույլատրում է նախնական տեսքով դիտել իրադարձության բոլոր մանրամասները (Նկար 103): Ընտրելով** «Մտնել Է-Աճուրդասրահ»**կապը (Նկար 102) օգտվողը մտնում է Է-Աճուրդի սրահ, որը տրամադրում է**

գնահարցման բոլոր ֆունկցիոնալությունները




(

Նկար 106):



Է-Աճուրդի մանրամասն տեղեկատվություն | Այս ՏՀ-ում օգտվողի իմ դերն է՝ SOASSOC

ՏՀCOmp Dial - Auction | Ցուցադրել ՏՀ ցանկը

**Է-Աճուրդի h/h : 4976 (*Պաշտոնական*)**

| | |
|---|---|
| Է-Աճուրդի տիպը : | Ժամանակի վրա հիմնված |
| Է-Աճուրդի գնահատման մեթոդը : | ՏԱՇՏ |
| Է-Աճուրդի կարգավիճակը | Փակ |
| Է-Աճուրդի իրադարձության տևողությունը : | 3 |
| Միացնել ավտոմատ երկարաձգումները : | Ոչ |
| Ավտոմատ երկարաձգումների առավելագույն թիվը : | 0 |
| Երկարաձգման տևողությունը : | 0 |
| Մինչև Է-Աճուրդի վերջն ընկած ժամանակը՝ երկարաձգման առկայության դեպքում : | 0 |
| Գնային առաջարկի ներկայացման տեսակը : | Համընդհանուր |
| Է-Աճուրդի մեկնարկային ամսաթիվը : | 2010/06/10 |
| Աճուրդի արժույթ : | AMD |
| Է-Աճուրդի գնային առաջարկի տեսանելիություն : | Դասակարգումը կնիքվել է |

**Է-Աճուրդի ռաունդներ**

| Հերթական համար | Ռաունդի ներքական համար | Ռաունդի կարգավիճակ | Մեկնարկի ամսաթիվ |
|---|---|---|---|
| 1 | 4978 | Փակ | 2010/06/10 16:55:00 |

**Նկար 103 Է-Աճուրդի իրադարձության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն**

Է-Աճուրդի իրադարձության մանրամասն տեսքը տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը (Նկար 103):

1. Է-Աճուրդի տիպը.

   **Ա.Ռաունդներ.** Տնտեսական օպերատորները մրցում են հիմնված մի քանի ռաունդի վրա (յուրաքանչյուր ռաունդին յուրաքանչյուր մասնակից կարող է տրամադրել մի եզակի գնային առաջարկ)

   **Բ.Ժամանակ.** Տնտեսական օպերատորները մրցում են հիմնված մի ստույգ ժամանակաշրջանի վրա (յուրաքանչյուր մասնակից կարող է տրամադրել գնային առաջարկների ցանկացած քանակ սահմանված շրջանի ընթացքում)

   **Գ.Համակցված (կոմբինացված).** Տնտեսական օպերատորները մրցում են հիմնված ստույգ տևողության ռաունդներով (յուրաքանչյուր մասնակից կարող է տրամադրել ցանկացած քանակի գնային առաջարկներ յուրաքանչյուր ռաունդի ընթացքում)

2. Գնահատման մեթոդ. **Ամենացածր Գին** կամ **ՏԱՇՄ**
3. Ռաունդների քանակ և յուրաքանչյուր ռաունդի տևողություն
4. Ռաունդների միջև միջակայքի տևողությունը
5. Օգտագործել ավտոմատ երկարաձգումներ
6. Ավտոմատ երկարաձգումների առավելագույն թիվը
7. Յուրաքանչյուր երկարաձգման տևողությունը
8. Իրադարձության ավարտից առաջ ընկած ժամանակահատվածը, երբ մի գնային առաջարկ ստացվելիս կմեկնարկի երկարաձգումը

9. է-Աճուրդի պլանավորած ամսաթիվ
10. է-Աճուրդի արժույթը
11. Ընտրած գնային առաջարկի տեսանելիությունը

## 13.2. Առաջարկի ներկայացումը

է-Աճուրդի սրահի հասանելիությունը ակտիվացվում է միայն իրադարձության սահմանված մեկնարկային ամսաթվի ու ժամանակի պահից: Օգտվողը պետք է ընտրի «**Մտնել է-Աճուրդի սրահ**»կոճակը  է-Աճուրդի սրահ մտնելու համար:




**Նկար 104 է-Աճուրդը կարգավիճակը**

է-Աճուրդի սրահը տրամադրում է գնային առաջարկ տեղադրելու բոլոր ֆունկցիոնալությունները այն իրադարձությունների համար, որոնք պարունակում են միայն ֆինանսական չափորոշիչ (այսինքն՝ գնահատման մեխանիզմը սահմանված է Ամենացածր Գինը) կամ ֆինանսական ու տեխնիկական ծրարում սահմանված չափորոշիչների համակցությունը (այսինքն՝ գնահատման մեխանիզմը սահմանված է ՏԱՇՄ):

Երկու դեպքում էլ օգտվողը կարող է էջի վերևում տեսնել հետևյալ տեղեկատվությունը (Նկար 105):

- է-Աճուրդի վիճակը (կարգավիճակը, ռաունդ և այլն)
- է-Աճուրդի արժույթը
- Իրադարձությանը վերաբերող ընդհանուր հրահանգներ (հրահանգները դատելու համար օգտվողը պետք է ընտրի կցորդված կապը)
- մինչև է-Աճուրդի/ ռաունդի վերջը մնացած ժամանակը




**Նկար 105  է-Աճուրդի սրահ, է-Աճուրդի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը**

### 13.2.1. Տեղադրել որևէ գնային առաջարկ ամենացածր գնի վրա հիմնված աճուրդում

**Իրադարձությունների այս տիպի ժամանակ գնային առաջարկների ներկայացումը կատարվում է միայն ըստ կցված ֆինանսական չափորոշիչի: Համակարգը ցույց է տալիս տալիս բոլոր մասնակցող ֆինանսական չափորոշիչները**




(

**Նկար 106): Օգտվողը տրամադրում է իր գնային առաջարկը, ըստ բոլոր մասնակցող ֆինանսական չափորոշիչների (օր.** «Խորհրդատվության արժեք» **և** «Ուսուցման արժեք»




Նկար 106) ու այնուհետև ընտրում է «**Ներկայացնել**» կոճակը գնային առաջարկը համակարգին ներկայացնելու համար:




**Նկար 106 Ներկայացնել Ամենացածր Գնի գնային առաջարկ**

**Հետևյալ տեղեկատվության դաշտերն են ցուցադրվում Ամենացածր Գնի Է-Աճուրդներում ի լրացումն Նկար 105 նկարում նկարագրված տեղեկատվությանը**




(Նկար 106):

- **Հաջորդ հաղթող գնային առաջարկ**. Հաջորդ գնային առաջարկի ամբողջական արժեքի առաջարկ՝ վարկանիշ տալու համար առաջին դիրքում
- **Գնային առաջարկի նվազագույն տարբերություն** (% -ով կամ բացարձակ արժեքով). նախորդ գնային առաջարկի հետ նվազագույն տարբերությունը
- **Նախորդ գնային առաջարկի արժեք**. վերջին գնային առաջարկի արժեքը

«Օգտվող» **բաժինը**




(Նկար 106) տրամադրում է գնային առաջարկների տեղադրման գործընթացի ընթացքում դասակարգման տեղեկատվությունը: Ցուցադրված տեղեկատվությունը կախված է Է-Աճուրդի տեսանելիության չափորոշիչից, ինչը սահմանվում է Գնման Պատասխանատու՝ Մրցույթի Համակարգողի կողմից:




Նկար 106, «**SO ընթացիկ**» շարքը ցուցադրում է ընթացիկ SO-ի վերջին գնային առաջարկը, մինչդեռ «**SO 1**»շարքը ցուցադրում է Է-Աճուրդին մասնակցող այլ SO-ի վերջին գնային առաջարկը: Մասնակցող Տնտեսական օպերատորները միշտ դիմակավորված են:

Համակարգը հուշում է օգտվողին հաստատել իր գնային առաջարկի ներկայացումը (Նկար 107): Ուղերձը պարունակում է տվյալ գնային առաջարկին վերաբերող բոլոր մանրամասները: «**OK**» կոճակի ընտրությունը ներկայացնում է գնային առաջարկը պլատֆորմին, մինչդեռ «**Cancel**» կոճակը կլուծարի գործողությունը:




**Նկար 107 Հաստատել գնային առաջարկի ներկայացումը (ամենացածր գնի վրա հիմնված աճուրդ)**

Եթե գնային առաջարկը վավերական է, ապա կցուցադրվի մի ընդունման ուղերձ (Նկար 108)։ Ընդունման ուղերձը պարունակում է առանձնահատուկ «Գնային առաջարկի Ստացականի հ/հ» ու առանձնահատուկ «Գնային առաջարկի Հաշ»։




**Նկար 108 Ընդունման ուղերձը (ամենացածր գնի վրա հիմնված աճուրդ)**

## 13.2.2. Տեղադրել գնային առաջարկը ՏԱՇՄ աճուրդում

Իրադարձությունների այս տիպում գնային առաջարկների ներկայացումն իրականացվում է ոչ միայն հայտի տեխնիկական ծրարում պարունակվող ֆինանսական չափորոշիչով։

Պլատֆորմը տալիս է բոլոր մասնակցող չափորոշիչների՝ ֆինանսական ու ոչ-ֆինանսական ցուցակը, (Նկար 109)։ Օգտվողը տրամադրում է իր գնային առաջարկը բոլոր ֆինանսական (օր. «**Խորհրդատվության Արժեք**» և «**Ուսուցման Արժեք**» Նկար 109) և բոլոր ոչ-ֆինանսական չափորոշիչների համար («**Նախագծում մասնակցող Բաժինների քանակը**» և «**Նախագծի վրա աշխատող խորհրդատուների քանակը**» Նկար 109)։ Օգտվողն ընտրում է «**Ներկայացնել**»կոճակը գնային առաջարկը համակարգին ներկայացնելու համար։




**Նկար 109 Գնային առաջարկը ներկայացնելը**

Համակարգը հուշում է օգտվողին հաստատել իր գնային առաջարկի ներկայացումը (Նկար 110): Ուղերձը պարունակում է տվյալ գնային առաջարկին վերաբերող բոլոր մանրամասները: «**OK**» կոճակի ընտրությունը կներկայացնի գնային առաջարկը պլատֆորմին, մինչդեռ «**Cancel**» կոճակը կլուծարի գործողությունը:




**Նկար 110 Պլատֆորմը հուշում է օգտվողին հաստատել իր գնային առաջարկը**

Եթե գնային առաջարկը վավերական է, ապա կցուցադրվի մի ընդունման ուղերձ (Նկար 111): Ընդունման ուղերձը պարունակում է առանձնահատուկ «**Գնային առաջարկի Ստացականի h/h**» և առանձնահատուկ «**Գնային առաջարկի Հաշ**»:




**Նկար 111 Գնային առաջարկն ընդունվեց**

Եթե գնային առաջարկը վավեր չէ, ապա օգտվողին կցուցադրվի սխալի ուղերձ (Նկար 112): Սխալի ուղերձը կնկարագրի, թե ինչու գնային առաջարկը չի գրանցվել համակարգում:




**Նկար 112 Գնային առաջարկը մերժվեց**

է-Աճուրդի գործընթացին մասնակցող տեխնիկական չափորոշիչի համար, օգտվողը կարող է նախապես դիտել չափորոշիչի մանրամասները ընտրելով  պատկերանիշը (ցուցադրվում է չափորոշիչի նկարագրության կողքին): Նոր պատուհանում պլատֆորմը ցուցադրում է չափորոշիչի այնպիսի մանրամասներ ինչպիսիք են՝ չափորոշիչի պարամետրերը, գնահատման պարամետրերն ու գնահատման բանաձևի պարամետրերը (Նկար 113).



չափորոշիչի պարամետրեր

| | |
|---|---|
| Տեսակ | Թիվ |
| Չափման միավոր | Ստեղնաշար |
| Քայլ | 1.00 |

Evaluation parameters

| | |
|---|---|
| Կշիռ | 100.00% |
| Շեմ | 40.00% |

Evaluation formula

| | |
|---|---|
| Բանաձև | Գծային |

Parameters of linear formula

| | | | |
|---|---|---|---|
| Ստորին սահման | 0 | Միավ | 0.00% |
| Վերին սահման | 500 | Միավ | 100.00% |

Լուծարել

**Նկար 113 Տեխնիկական չափորոշիչի մանրամասները**

### 13.2.3. Երկարաձգումներ

Ավտոմատ երկարաձգումները ակտիվացվում են Է-Աճուրդի իրադարձության ստեղծման ընթացքում Գնման Պատասխանատու՝ Մրցույթի Համակարգողի կողմից: Ավտոմատ երկարաձգումների օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը օգտվողը կարող է ստանալ դիտելով Է-Աճուրդի իրադարձության մանրամասն տեղեկատվությունը (Նկար 103): Օգտվողին տրամադրվում են հետևյալ տեղեկատվական դաշտերը (Նկար 114):

- Ավտոմատ երկարաձգումների առավելագույն քանակ
- Յուրաքանչյուր երկարաձգման ռաունդի տևողությունը
- Ժամանակը նախքան Է-Աճուրդի վերջը, երբ երկարաձգումն հնարավոր է



| | |
|---|---|
| Միացնել ավտոմատ երկարաձգումները : | Այո |
| Ավտոմատ երկարաձգումների առավելագույն թիվը : | 02 |
| Երկարաձգման տևողությունը : | 5 |
| Մինչև Է-Աճուրդի վերջն ընկած ժամանակը՝ երկարաձգման առկայության դեպքում : | 5 |

**Նկար 114 Ավտոմատ երկարաձգումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն**

Գների առաջարկների ներկայացման գործընթացի ընթացքում օգտվողը նախապես տեսնում է, թե արդյոք կիրառվում է երկարաձգում, թե ոչ (Նկար 109 և Նկար 108). : Եթե երկարաձգում չի կիրառված, ապա էջի ներքևում ցուցադրվում է «**Երկարաձգում չի կիրառվել**» ուղերձը (Նկար 115).



**Երկարաձգումներ չեն կիրառվել**

**Նկար 115 Ավտոմատ երկարաձգում չի կիրառվել**

Երկարաձգում կիրառելիս պլատֆորմը ցուցադրում է երկարաձգման համարն և երկարաձգման վերջի ժամանակն ու ամսաթիվը (Նկար 116).




**Նկար 116 Կիրառված է ավտոմատ երկարաձգում**

## 13.3. Ուղերձի ցուցանակը

է-Աճուրդի մոդուլը տրամադրում է Տնտեսական օպերատորների ու է-Աճուրդը վարիչի միջև հուշարարական հաղորդակցության ուղերձների ցուցանակի ֆունկցիոնալություն (Նկար 117).




**Նկար 117 է-Աճուրդն ուղերձի ցուցանակը**

Ուղերձի ցուցանակի վերին մասը ցուցադրում է մասնակից Տնտեսական օպերատորների հաղորդած բոլոր ուղերձները, ինչպես նաև է-Աճուրդի Վարիչի կողմից հաղորդված ուղերձ/պատասխանները:

Ուղերձ առաքելու համար օգտվողը լրացնում է «**Առաքել նոր ուղերձ**» բաժինն և ընտրում է «**Ուղարկել ուղերձը**» կոճակը ուղերձը ցուցանակի վրա առաքելու համար (Նկար 118).




**Նկար 118 Ուղերձի տեղադրումն ուղերձի ցուցանակի վրա**

## 13.4. Է-Աճուրդի իրադարձության առկախումը

Երբ իրադարձությունն առկախվում է, ապա գնային հայտեր այլևս չեն թույլատրվում (առկախման շրջանի ընթացքում): Պլատֆորմը տեղեկացնում է բոլոր մասնակից Տնտեսական օպերատորներն, որ իրադարձությունն առկախված է և երբ կարող է վերսկսվել (Նկար 119) : Երբ իրադարձությունը վերսկսվի օգտվողը պետք է ընտրի «**Մտնել Է-Աճուրդի սրահ**»կոճակը Է-Աճուրդի սրահ հասանելիություն ստանալու և առաջարկների ներկայացումը շարունակելու համար:




Նկար 119  Է-Աճուրդն առկախված է

## 13.5. Է-Աճուրդի նախնական տեսքը

Է-Աճուրդի յուրաքանչյուր ռաունդի վերջում պլատֆորմը կներկայացնի Տնտեսական օպերատորի առաջարկների ներկայացման ակտիվությանը վերաբերող մանրամասներ (օրինակ՝ «Լավագույն Գնային առաջարկը ըստ ռաունդի»): Նկար 120 տալիս է մի օրինակ:




Նկար 120 Տեղեկատվությունը ռաունդի վերջում

Է-Աճուրդի վերջում, պլատֆորմը կտեղեկացնի Տնտեսական օպերատորին, որ իրադարձությունը ավարտվել է (Նկար 121).




**Նկար 121 Է-Աճուրդի իրադարձության վերջը**

Պլատֆորմը մասնակից Տնտեսական օպերատորին կտրամադրի հետևյալ տեղեկատվությունը (Նկար 122):

- Է-Աճուրդի հաղթող գնային առաջարկը
- Տնտեսական օպերատորի դասակարգումը
- Օպերատորի լավագույն գնային առաջարկը
- Մանրամասն տեղեկատվություն Տնտեսական օպերատորից ստացված բոլոր գնային առաջարկների մասին
- Դասակարգման տեղեկատվությունը ըստ ռաունդի
- Է-Աճուրդի մի քանի գրաֆիկներ (Նկար 124 և Նկար 125)

**Է-Աճուրդի դասակարգումը` : poxos petros**

| | |
|---|---|
| Է-Աճուրդի կարգավիճակը | Փակ |
| Հաղթող գնային առաջարկը | 40000.00 |
| Ձեր դասակարգումն է` | 1 |
| Ձեր լավագույն գնային առաջարկը | 40000.00 |

**Գնային առաջարկների մանրամասները**

| Գնային առաջարկի հ/հ | Գնային առաջարկի ժամանակային նիշը | Գնային առաջարկի արժեքը |
|---|---|---|
| 7331 | 2010/06/24 17:05:00 | 51000.0 |
| 7335 | 2010/06/24 17:10:15 | 48000.00 |
| 7337 | 2010/06/24 17:12:27 | 40000.00 |

**Ռաունդի դասակարգման պատմություն**

| Ռաունդի համար | Դասակարգում ռաունդից հետո |
|---|---|
| 1 | 1 |
| **Եզրափակիչ դասակարգում :** | 1 |

**Է-Աճուրդի գրաֆիկներ**

**Նկար 122 Գնային առաջարկի տեղեկատվությունը**




Նկար 123 Գնային առաջարկի տեղեկատվությունը




Նկար 124 SO-ի վերջին գնային առաջարկը




Նկար 125 SO-ի դասակարգումն ըստ ռաունդի

# 14. Պայմանագրի Շնորհումը

Եթե Տնտեսական օպերատորին պայմանագիրն է շնորհվում, ապա օգտվողի առաջադրանքների ցուցակում կհայտնվի «**Պատասխանել պայմանագրի շնորհմանը**» առաջադրանքը (Նկար 126).




**Նկար 126 Պատասխանել պայմանագրի շնորհման առաջադրանքին**

Օգտվողը կարող է ընտրել ընդունել կամ մերժել շնորհված պայմանագիրը (Նկար 127) : Եթե նա մերժում է պայմանագրի շնորհումը, ապա տեքստային տարածքում պետք է պարտադիր նշվի մերժման պատճառը (Նկար 128).




**Նկար 127 Ընդունել պայմանագրի շնորհումը**




**Նկար 128 Մերժել պայմանագրի շնորհումը**

# 15. Լրացուցիչ Ֆունկցիոնալություն

## 15.1. Գնումների Ընդհանրական Բառարանի (ԳԸԲ) կոդերի մտցնելը

Գնումների Ընդհանրական Բառարանի (ԳԸԲ) կոդը մտցնելու համար պլատֆորմը տրամադրում է կոդն ընտրելու ֆունկցիոնալություն՝ հասանելի երբ օգտվողն ընտրում է դաշտի կոդքի որոնման պատկերանիշը.




**Նկար 129 ԳԸԲ կոդի դաշտը**

ԳԸԲ կոդի ընտրության պատուհանում տրամադրվում է հետևյալ ֆունկցիոնալությունը.

1. ԳԸԲ հիմնական պատուհանից ընտրել որևէ ԳԸԲ կոդ.
   - Բոլոր կոդերի մանրամասներն ակտիվանում են ծառի հիերարխիայով ⊞ և ⊟ նշաններն օգտագործելիս (Նկար 130).




**Նկար 130 ԳԸԲՀ կոդերի հիերարխիկ կառուցվածքը**

   - Երկու անգամ կտտացնելով որևէ ԳԸԲ կոդի վրա այն ավելացվում է ընտրված կոդերի ցուցակին.
     - Բոլոր ընտրված կոդերը ներառվում են ընտրված կոդերի պատուհանի մեջ:
     - և կոճակները տրամադրում են օգտագործվող ԳԸԲ կոդերի կարգը բնորոշող ֆունկցիոնալություն: Իբրև լրացում՝ օգտվողը կարող է ջնջել որևէ ընտրված ԳԸԲ կոդ օգտագործելով կոճակը (Նկար 131).




**Նկար 131 Ընտրված ԳՀԲ կոդերը**

2. Օգտվողը կարող է օգտագործել ԳՀԲ կոդերի որոնման ֆունկցիոնալությունը (Նկար 132)։
   - Օգտվողը որոնման դաշտում տրամադրում է վերնագիրը կամ կոդի համարը (ամբողջ կամ մասնակի նկարագրությունը)։
   - Օգտվողը ընտրում է «**Որոնել**» կոճակը։
   - Արդյունքները ցուցադրվում են արդյունքների որոնման պանելի մեջ։ Ընտրելով որևէ ԳՀԲ կոդ ու ընտրելով «**Ավելացնել ցուցակին**» կոճակը կներառվի ընտրված ԳՀԲ կոդերի մեջ (Նկար 133).




**Նկար 132 ԳՀԲ որոնման ֆունկցիոնալությունը**




Նկար 133 ԳԸԲ կոդերի ընտրությունը

Վերջապես՝ օգտվողն ընտրում է «Ներկայացնել» կոճակը՝ ընտրած կոդերը ծրագրին ներկայացնելու համար (Նկար 133) : Բոլոր ընտրված կոդերը, այնուհետև ներկայացված կլինեն համապատասխան դաշտում:




Նկար 134 Ներկայացնել ԳԸԲ կոդերը

## ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎԵՐՋԸ